Հավասար կրթություն բոլորի համար

Բյուջե

Ծրագրի նպատակ

Բարելավել հաշմանդամություն ունեցող երեխաների համար բարձրորակ թերապևտիկ ծառայությունների հասանելիությունը՝ Երևանում գործող Ուսուցման դժվարություններ ունեցող երեխաների կենտրոնում վերանորոգելով հիմնական թերապևտիկ տարածքները:

Նկարագրություն

Հայ Օգնության Ֆոնդը (FAR) Ուսուցման դժվարություններ ունեցող երեխաների կենտրոնի երկարամյա գործընկերն է: Այն պետական կառույց է , որը աջակցում է 3–18 տարեկան երեխաներին, որոնք ունեն հատուկ կրթական պայմանների կարիք: Կենտրոնը միաժամանակ հանդես է գալիս որպես բարդ դեպքերի անմիջական ծառայություններ մատուցող և որպես մեթոդաբանական կենտրոն՝ համակարգելով Հայաստանի 24 մարզային մասնաճյուղերի աշխատանքը:

Ամեն տարի շուրջ 100 երեխա ՀՄԿ—ում անցնում է համապարփակ, բազմամասնագիտական գնահատում, որին հաջորդում են անհատական միջամտության ծրագրեր՝ ներառելով խոսքային, հոգեբանական և սենսորային թերապիաներ: Կենտրոնը նաև մշակել է նորարարական և ներառական մոտեցումներ՝ արվեստի, կավագործության, թատրոնի և երաժշտության միջոցով իրականացվող թերապիաներ, որոնք նպաստում են հաղորդակցման հմտությունների զարգացմանը, հուզական ինքնարտահայտմանը և ինքնավստահության բարձրացմանը՝ ներգրավելով նաև ընտանիքի անդամներին և հասակակիցներին:

Այնուամենայնիվ, մի շարք թերապևտիկ սենյակներ գտնվում են վատ վիճակում և հարմար չեն արդյունավետ թերապևտիկ աշխատանքի համար: Երաժշտական թերապիան ներկայումս հնարավոր չէ սկսել՝ համապատասխան տարածքի բացակայության պատճառով, թեև կենտրոնն ունի թե՛ մասնագետ, թե՛ անհրաժեշտ գործիքներ: Ծրագրի շրջանակում նախատեսվում է վերանորոգել չորս թերապևտիկ սենյակ՝ արվեստի, կավագործության, երաժշտության և օժանդակ տեխնոլոգիաների, որպեսզի ստեղծվի անվտանգ, գործնական և ջերմ միջավայր հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

Բյուջե

Նյութ	Նախնական արժեք (ԱՄՆ դոլար)
Օժանդակ տեխնոլոգիաների գրադարան	$8,100
Երաժշտական թերապիայի սենյակ	$7,900
Արվեստի թերապիայի սենյակ	$5,800
Կավագործության թերապիայի սենյակ	$8,300

Ընդհանուր

Փոխարժեք՝ *1* ԱՄՆ դոլար = *380* ՀՀ դրամ

$30,100